ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 72-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԿԱՆՉՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՇՎԱԾ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, պետական ռեզերվների գրասենյակի, միգրացիայի և քաղաքացիության ծառայության, փրկարար ծառայության, ոստիկանության ծառայողների, քաղաքացիական ծառայողների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց և քաղաքացիական աշխատանք կատարողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ աշխատակից) կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների հետաքննության, նախաքննության, դատական կամ այլ իրավապահ մարմիններ կանչվելու վերաբերյալ տեղեկատվությունը կենտրոնացնելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ ՆԳՆ աշխատակիցներին իրավաբանական օժանդակություն ցուցաբերելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ենթակա պետական մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, պետական

ռեզերվների գրասենյակի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին՝ ՀՀ ՆԳՆ աշխատակցի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների հետաքննության, նախաքննության, դատական կամ այլ իրավապահ մարմիններում քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելու, կամ որպես վկա, կամ որևէ այլ կարգավիճակով կանչվելու յուրաքանչյուր դեպքում նախապես իրազեկել ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությանը՝ հնարավորինս մանրամասն ներկայացնելով գործի հանգամանքները և էությունը, կանչվող անձի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն), կարգավիճակը, քրեական վարույթի կամ դատարանում քննվող գործի համարը, ինչպես նաև նշել տվյալ գործի շրջանակներում ՀՀ ՆԳՆ աշխատակիցներին իրավաբանական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին:

Նույն գործի վերաբերյալ կրկին իրազեկել միայն կարգավիճակի փոփոխության դեպքում:

2. ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետին՝ սույն հրամանի 1-ին կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո իրավաբանական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում ողջամիտ ժամկետում միջնորդություն ներկայացնել ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչություն՝ ՀՀ ՆԳՆ աշխատակիցներին համապատասխան իրավաբանական օժանդակություն ցուցաբերելու համար:

3. ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետին՝ իրավաբանական վարչության իրավասության սահմաններում ապահովել սույն հրամանի շրջանակներում ՀՀ ՆԳՆ աշխատակիցներին պատշաճ իրավաբանական օժանդակություն ցուցաբերելու գործընթացը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

«08» 10 2024թ.

ք. Երևան